

ԱՍԿԵ ՎԵՐՁԸ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
 սարկիսի 12 Ֆր.
 վեցամսեայ 6 "
 Անաստասիանի
 համար սարկիսի 15 "
 վեցամսեայ 8 "
 Ամերիկայի համար
 Տարիկան 3 Տր.
 վեցամսեայ 1.50 "
 ԿԱՆԻՒԻԿ ՎՃԱՌԵԼԻ

Իրանացի սոցիալական
 շին երեսին համար 40 ս.
 յսկ վերջին երեսին հա-
 մար 20 սանսիլե կ. երեքին
 սեկի սեկամսեայ համար
 20 Սի գեղջ կըլլայ:

ՇՆԱԲԹ

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռքի
 > 15 ՍԱՆՍԻԼԵ <

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԻ ԶՈՐԵՔԵՆԱԹԻ ԵՒ ՇՆԱԲԹ ՍՐԵՐԸ

ՇՆԱԲԹԻՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ ԵՒ ԿԱՆԵՐԻ ՎՃԱՐԷ

ԱՍԿԵ ՎԵՐՁԸ

Ասկէ առաջ ստորուկ էինք մուշկ
 հլու.
 Վախը մտուած մինչև խորը մեր
 հոգւոյն.
 Անգէտ՝ կուռի գազափարին վեհա-
 շոյն,
 Թոյլ տուինք մեզ զլիթայայիրկ պա-
 հելու:
 Երբ ոտնաց մահ երկայնքովը փո-
 ղոցին,
 Մեզի չառթեց կուռի փափաք, այլ
 սուգ, ցաւ.
 Եւ ոչ աշխարհ կարեկցեցաւ, մեղ-
 քըցաւ:
 Երբ սաշերուն վրայ մեզի մորթե-
 ցին:
 Թո՛յլ Եւրոպան մեզմէլ ուզեց մեր
 ցաւեր
 Իր ճարտասան շեշտերովը փուճ խոս-
 քին
 Եւ սահեցուց մեր ափին մէջ իր
 ոսկին
 Կարծելով թէ ափկայ մեզ կը բա-
 ւէր:
 Ասկէ վերջը պիտի խրոխտ ճակա-
 տինք,
 Մարդաստուղ մեր զէնքերով վա-
 տին զէմ.
 Պիտի դիմենք կուռի վայրը ժրպ-
 տազէմ,
 Արբելու՝ մեր ստրկութեան նախա-
 տինք,
 Ու պիտի տանք փորձը հայուն քա-
 ջութեան,
 Որ Եւրոպան մեզ չը գիտայ, այլ
 յարդէ,
 Եւ գտնուին պիտի քաջեր ի կարկէ,
 Որ զէն ձեռին մեզ օգնութեան
 պիտի փութան:
 Յայնժամ պիտի արձագանքեն լեռ,
 րլուր
 Աորտակու՛մը շղթաներուն ժանտ,
 ցաւոտ.
 Ու պիտի տայ, հորիզոնէն լո՛յս
 աւօտ
 Աւետիար մեր փրկութեան հեշտա-
 լուր:
 ՎԷՏԱ

ՆԱԽ ԶՏՈՒՄ

II

Ու եւ ժողովրդի յեղափոխա-
 կան կեանքի մէջ պարբերաբար
 իրար յաջորդող եռանդն ու մե-
 ռելութիւնը կարող են երկու հե-
 տեանք սեննալ. — կամ վեր-
 ջապէս յեղափոխական եռանդով
 կը վարակվի ժողովրդի մի կա-
 ռուսը զանգաւածը և վերջնական
 ահեղ յնցումով կը ջախջախէ իր
 վիզը ճնշող լուծը, և կամ թէ վերջ
 նապէս հրաժեշտ տալով իր թան-
 կագին գոհերի յիշատակին և
 նրանց կտակած բարձր ձգտում-
 ներին կը ենթարկվի մշտական
 մեռելութեան:

Այս երկու հետեանքները որ-
 չափ որ արդիւնք են ժողովրդի
 ներքին տոկոսնութեան և տղատա-
 սիրական ձգտումներ չափի, նոյն
 չափ էլ արդիւնք են յեղափոխա-
 կան մարմիններ իրար կուտեան:

Հայ ժողովրդը տոկոսն է. և
 դրանում կարծեմ ոչ ոք չէ կա-
 կածում. որոշ չափով և պատա-
 սէր է. Ուրեմն գործը մնում է յե-
 ղափոխական մարմիններին. նը-
 րանք պէտք է ընդունակ լինեն
 մեր ժողովրդի իրենց տրամադ-
 րելի լաւ յատկութիւններէն օգ-
 տը վերջը:

Այո, պէտք է կարողանան օգտը
 վել և իրենց հետ մեր ժողովր-
 դի մի մեծ զանգաւածը միացնել
 մեր յեղափոխութիւնը ալաաու-
 թիւնով պսակելու հետեանքին
 հասնելու համար, եթէ իրենք՝
 յեղափոխական մարմինները գործ
 նական ապստամբներէն կազմ-
 ված լինեն:

Ի հարկէ մեր տեսականապէս
 յեղափոխական մասն էլ պէտք է
 գործի. բայց նրա ձեռքը չը
 պէտք է տալ յեղափոխութեան
 զեկը. որովհետեւ այդ տարրը
 կազմված է լինում կամ տեսա-
 կան ծայրայեղ յեղափոխականե-
 րից, և կամ թէ պաշտաւի մի-
 ջոցներ սիրողներէն:

Առաջին տեսակին պատկանող-
 ները անիրականաւոր, անօգուտ

ծրագրներ են առաջարկում, և ի
 իրենք չափազանց օգետովելով
 իրենց ծրագրներով, մեծ զոհո-
 ղութիւններ են առաջարկում ա-
 նել. և շատ բնական է, որովհե-
 տեւ իրենք, բացի խօսքից, ու-
 թիշ ոչինչ չեն զոհում:

Երկրորդ տեսակին պատկանող
 ները ահագին զիջումներ են ա-
 նում ոչ— յեղափոխական տարրին
 և մի գեղեցիկ օր իրենք էլ դառ-
 նում են ոչ յեղափոխականներ, ու
 խուսափում ամեն մի քայլից, որը
 կարող է փնտսել իրենց այն ծրա-
 գրներին, որոնք բուն յեղափո-
 խութեան հետ գրեթէ ոչ մի կապ
 չունեն:

Ուրեմն պարզ է որ, երբ յեղա-
 փոխական գործերի զեկը ընկ-
 նում է այդ լուր տեսական յեղա-
 փոխականների ձեռքը, յեղափո-
 խութիւնը կամ ծայրահեղ անօգուտ
 ոտտումներ է գործում, կամ թէ
 սովորական լիբերալների մի քա-
 ղոսակութեան գործ գառնում:

Երկու պարագաներում էլ փնտ-
 սողը և վստանգողը յեղափոխա-
 կան գործն է. որովհետեւ դուրս
 է գալիս իր բնական ընթացքից
 և ընկնում է երկու տարբեր
 ուղղութեամբ ձգողական ուժերի
 մէջ:

ՀՆՁԱԿԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

(Շրջաբերական)

Սիրելի ընկերներ.

Անհուն ուրախութեամբ կը հա-
 ղորգենք ձեզ որ Հնչակեան եր-
 կու հասուածներու միութեան
 պայմաններուն վրայ, վերջապէս,
 երկու կողմէն, անգառնալիօրէն
 համաձայնութիւն գոյացած է:

Կը մնայ միայն մեր կողմէն
 հաւասար թուով՝ Միացեալ կեդր-
 վարչութեան անդամներ և «Հն-
 չակ» ու «Նոր կեանք» յեղա-
 կանատէրներ նշանակել:

Գիտէք արդէն, թէ ներկայ
 կեդր. վարչութեանս պաշտօնա-
 վարութեան շրջանը լրացած էր,
 ու մենք՝ ամբողջ կուսակցութեան

հաւանութեամբը՝ տարուան մը
 համար միայն ըկարաձգեցինք
 զայն: Այսօր այդ տարին ալ լը-
 րանալու վրայ է, ու մենք շա-
 տոնց ցրտած կրլայինք արդէն
 ընդհ. ժողովի մեր հրաւիրագիր-
 ները, եթէ Միութեան դժուարին
 ու կնճռոտ խնդիրը, իր ձգձգուած
 յարափոփոխ ընթացքով, մեզ
 տարապայմանօրէն զբաղեցուցած
 չըլլար և եթէ միեւնոյն ատեն
 մեր մասնաճիւղերը՝ մասնաւորա-
 պէս Սմերիկայէն՝ մեզի բացար-
 ձակ լիազօրութիւն տուած չըլ-
 լային զայն ի գլուխ հանելու:

Իրտէք նոյնպէս որ՝ կուսակ-
 ցութեանս հիմնական կանոնադ-
 րին համեմատ արդէն իսկ ան-
 հրաժեշտ է ընդհ. ժողով գումա-
 րել, մասնաւոր թէ ներկայ կեդր-
 վարչութեան անդամներէն ոմանք
 հրաժարած են:

Հիմա որ Միութիւնը իրակա-
 նաջաւ, պէտք է ունենանք մի-
 ացեալ ու միակ Հնչակեան կու-
 սակցութեան նոր կեդր. վարչու-
 թիւնը մը, որուն պիտի անդա-
 մակցին Հիներուն և վերակազմ-
 եալներուն կողմէն հաւասար
 թուով մարդէկ:

Եւ որպէսզի նոր կեդրոնին հե-
 ղինաչու թիւնը անվիճելի ըլլայ,
 դարձեալ անհրաժեշտ է որ անոր
 անդամները ընտրուած ըլլան
 անպաճճաւ ամբողջ կուսակցու-
 թեան բացարձակ կամքովը: Այ-
 սինքն՝ իւրաքանչիւր Հնչակեան
 հասուածի մարդիկը պէտք է
 ընտրուին իրենց ուրոյն ընդհ.
 ժողովի կողմէն:

Ասկից զատ, ուրիշ նոյնքան
 լուրջ ու ծանրակշիռ պատճառ-
 ներ ալ կան, որոնք նոյնպէս կը
 շեշտեն ընդհ. ժողովի անմիջա-
 կան ստիպողականութիւնը:

Պարզ է, թէ Հնչակեան Միու-
 թեանէն վերջ, Միացեալ կեդր-
 վարչութիւնը պատասխանատու է
 մի միայն իր օրով եղած գործե-
 րուն և հաշիւներուն համար՝ Մի-
 ացեալ ու միայն Հնչակեան կու-
 սակցութեան ընդհ. Պատգ. մու-
 ջովին սուղեւ:

Հնչակեան Միութեանէն առաջ

եղած թէ Հին և թէ Վերակազմ-
եալ Հնչակեան գործերուն կամ
հաշիւներուն համար հաւաքական
պատասխանատուութիւն ընդու-
նի կարելի չէ անշուշտ : Իրա-
քանչիւր հատուած պատասխա-
նատու է միայն իր գործերուն և
իր հաշիւներուն, որոնք իսկ
քան երկու կեդրոններու վերջ-
նական միացումը պէտք է քն-
նուած, վաւերացուած և փախուած
ըլլան իւրաքանչիւր իր ընդհ-
ժողովին կողմէն :

Մէկ կողմէն օրինական բոլոր
անհրաժեշտ ձեւակերպութիւն-
ները կատարած ըլլալու, միւս
կողմէն գործը անառարկելի և ան-
պահով հիմնուած վրայ հաստատե-
լու համար Հնչակեան Գ. Բն.
Պատգ. արտասովոր ժողովը պիտի
գումարուի Լօնսօն, 1902. Մա-
յիս 15-ին (ը. ե.) հետեւեալ օ-
րագրով .

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

Հնչակ. Կուսակ. Կ. Վարչ. կողմէն
Ատենադպիր Ատենապետ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Մուշ, 29 Յունիս 1902

Սիրելի ընկեր

Վերջին գրուած երկու երեք նա-
մակներով Հայդուկային խումբերու
մասին, ձեպի պարզ է թէ՛ յամենայն
դէպս այդ քաջարի կուսակցներու
ներկայութիւնը, այս վերջին երեք
չորս տարիներու մէջ, մեծ ազդեցու-
թիւն գործած էր Հայդուկային Կ. Բն.
հարուստին յարկէն սկսեալ մինչեւ
ամենապարզ, էն չքաւոր պղծատ
խրճիթին համար . եւ այդ պատճա-
ռաւ ալ ամեն դասակարգը սկսեալու
թեամբ մը կը վերաբերի դէպի
հայդուկային ընչքի : կեանքի ու կատ-
ւոյ ապահովութիւնը յեղափոխական
կազմակերպութեան ու ստալգրա-
ցութեան մէջ տեսնելով . ամեն բա-
նէ, առաջ ատոր ուժ կուսան, ու ան-
մենայն խնամքով կը գուրգուրան
վրան :

Մի միայն է թէ կայ ու կը գտնուի
ցուալի կէտ մը, այն է որ՝ Մշոյ
ընդարձակածաւալ դաշտին ու իր 13
գաւառներու համեմատ, այդ չնչին
կուսակցութիւնը անհամարապատասխան է .
ատոր համար ալ, ամեն ժամանակ
որքան որ ընդհարուներ տեղի ունե-
ցեր են, համեմատաբար մենք աւելի
կորուստներ ունեցած ենք, ու կու-
նենանք ընդ միշտ :

Քանի որ գիտէք, մենք ալ շատ
անգամներ մեր ընկերական մասնա-
ւոր նամակներով ձեզ յիշեցուցած ենք
թէ՛ Մշոյ արեւմտեան կողմ գտնուող
Սեւ լեռան շղթան մինչեւ Նէմուս
ու Քոստըր լեռները Անդամիկին եւ
իւր երկու ընկեր խմբակներու
կեդրոնավայր ըլլալով, այդ տեղի
պարզ քիւրտ աշխրհներն, ամեն
ժամ և վարկեան շան պէս կը զողան.
Իսկ միւս կողմէն Մշոյ զաշտի արե-
ւելեան կողմէն Չարպը Հորէն բռնե-
լով Խարամէշ, Սերկի, Քարկիոյ ու

Բիւրակներն գտնուողն, — այդ լեռ-
ներն են որ Պահալուէնի ու Վարդոյ
գաւառներ կը բաժնեն Մշոյ զաշտէն .
— մինչեւ արեւմուտք Կիտուկ ըսուած
տեղը . ամառի միացած է ու բարձր չէ
ունեցած հայդուկային ներկայութիւնը
տեսնել ու կենդանութեան ոգի առ-
նել . ատոր համար ալ այդ տեղի գա-
զան համիտիէ աշխրհները, նա մա-
նաւանդ կատարութեան թելադ-
րութեամբ հարկահաւաքութեան պա-
տուակով ճրպարանցի աշխրհի էլ
ազատին Խարախիմ ազան, որ համի-
տիէ ալային խայմախան է, այդ
չիջանի հայ գիւղերու գլխին պատու-
հաս կարգուեցաւ . ազատ համարձակ
իւր գազանութիւններն ի գործ կը
դնէ, մտած տեղերը քար ու քանդ
ընելով :

Այդ մասին, մենք առաջմէն մեր
գրած շարք մը նամակներով, հրա-
ւէր կարգացիք Հայ թղ. Գաղակ-
ցութեան ու ի մասնաւորի մեր
հայրենակից եղբարց, ու շարքութիւն
ներն այդ կողմի վրայ հրաւիրու-
որ օր առաջ անց փութային, որ
հայդուկային վրիժառու գնդակէն այդ
տեղեր պարզ հայերն ևս օգտուէին
Բայց աւաղ որ մեր հրաւիրը նշանա-
կութեան զորի մնաց ամեն կողմ-
բէն : Ատոր հակառակ մաս մը ալ
ստանալու լնթիքներուն գործիք
դառնալով, ընամենկան ամեն մէկ
սրբութիւններս վրայ սուրնք ու
կուսանք . դեռ եւս չենք զգաստա-
նար մեր լաւ ու վատ կողմի չը կըր-
նալ զանազանելով . գոնէ լաւին չհե-
տեւելու, ու վատին ալ հայ արեան
ու քրտանական ամեն մէկ անպատ-
ուութեան թուքը այդ տեսակ չամ-
չըցածներու ճակատին տալով ընդ
միշտ հեռանային, ու մեր երկրին
մէջ գործած թէ՛ր ստանձնող կուսակ-
ցութեան շուրջ բոլորելով գործէին,
որ մէկ ուղղութեամբ ու մէկ հրա-
հանգով կը գործուի ցարդ, առանց
պղտիկ բաժանում մը կամ ընդդի-
մութեան մը իսկ հանդիպելու . կա-
տարեալ դիւնորական կարգապահու-
թեամբ առաջնորդուելով :

Անդամակին առաջելոց վանքին
մէջ ապաստանելին, Ս. եւ Գ. խմբա-
պետներու համարութե ու Քոստը վե-
րադառնալն ու մէկ երկու ընդհա-
րուներ ունենալն կրկին կարմիր
զագանի կ'առաջարկութիւն թիւք ու
քիւրդ աշխրհներու գազանութիւն-
ներ գոգոնելով շարժիլ սկսան, սե-
րելու քանդելու նպատակով, Բզից
հայ գիւղը Սահտանցի աշխրհի
յարձակմանց ենթարկուելով, երկու
ուստէք ընդհարման միջոցին հայե-
րէն եօթը կապանուին, որոց երկու-
քի անուր դեռ ևս յայտնի չեղաւ,
իսկ միւս հինգն — են Կակոյ-
եան Պետրոս, Այվաղ, Մուրատ, Համ-
բարձու մեան Ստեփան, եւ Մարգար
անուն անձերը ու դեռ ևս տեսնեմք
թէ այս զարնան ինչք պիտի գան
ու անցնին մեր գլխէն : Ականջ խօ-
սի այն ճիւղներուն, որ դեռ կը
համարձակին արտասահմանի մէջ պա-
տակուսութիւն ձգելով, բաժանումներ
ներ ստալ ըրելու, ժամանակ չէ
ըսելով . այն ինչ միւս կողմէն իր
քի, քիւրտի, չէրքէզի ու լազի սուրն
ու սուրն վայրկեան առ վայրկեան
հայ անուրը ըրողովին զնջելու ու
ընդ միշտ մէջտեղէ վերցնելու կտե-
ւէ է :

ՍԻ ԽԱՐԷՔ

«Իրաւունք»-ի մարտ 23 թուոյն
մէջ, Շուվալէն մի խարուիք վեր-
նագրով եւ գողթական ծածկանու-
նով թղթակցութիւն մը երեւաց : Ա-
ւելորդ պիտի ըլլար եւ անտղի չա-
փուիլ ու պատասխանել անձնական
չարածին հաշիւներէ . փոքուն նկա-
տուներէ ու թանցէ թելադրուած
նախանձակէզ թղթակցի մը անազնիւ
ցափոսանքներուն, եթէ խաբեպա-
տիք ու ստալոգ յերիւրեմներով,
ընթերցող հասարակութիւնը խար-
չու նողկալի արարքին դիմած չի-
լար :

Ճշմարտութեան մը խեղաթիւրու-
մը . խնդրոյն ունեցած հանրային
հանգամանքը եւ թղթակցէ մը հան-
րային ու բարոյական տեսակետով
պահանջելի պարտաւորութեանց անէ-
ութիւնը, մեր վրայ բարոյական
պարտք կը դնեն պատասխանել զպղ-
թակալին . եւ պարզել ինչո՞րք յա-
րակից ամեն պարագաներով :

Գողթականի թղթակցութիւնը
կարելի է ամփոփել հետեւեալ համա-
ոտութիւններով . Ա. թէ՛ Շուվալէն
հանրային գործերը, այժմ աւելի քան
երբէք, նախանձակի յիճակ մը ունին.
Բ. թէ՛ դիմակաւոր կրթականներ,
ցեցեր, կրթական հաստատութեանց
յատուցիմութեան խոչընդոտ հանդի-
սանալով քար գողթակցութեան կը
գառնան . Գ. այդ մտադատու ողոր-
մակները, պատրուակալ յեղափո-
խական գործունեութեամբ, կը շա-
հագործեն Պետո Պալլարացիի ա-
նունը :

Իրականութեան հակառակ եւ քա-
ղաքակրթին սուտ է գողթականի յայ-
տարարութիւնը թէ՛ Շուվալէն հա-
րային կամ հասարակական գործերը,
անցեալին աւելի նախանձակի են :

Հանրային կամ հասարակական
գործը բնելով ընդհանրապէս կը հար-
կուին վարժարանի, կեցեցեցոյ,
կրթական պատուէից, հոգեւորա-
կանութեան, թաղականութեան, հո-
գաբարձութեան, ընթերցարանի, լը-
սարանի եւ ուրիշ մարդասիրական եւ
բարեկեցական ինչ ինչ հաստատու-
թեանց . եւ կազմակերպութիւններու
եւ անոնց արնշակից հարցերու վե-
րաբերեալ խնդիրներ : Կրթական կամ
վարժարանական հարցն ու ուսու-
նական վիճակը, որ հասարակու-
թեան մը մտադր զարգացման հա-
յելին եւ յատուցիմութեան շօշափելի
ապացոյցն ու իրական փորձաքարն
է, հանրային հարցերու ու շարքաւ
ու ամենակենսական ըլլալով, ամեն
բանէ յատու պէտք է ծանրանալ սոյն
հարցի վրայ : ցոյց տալու համար
Գողթականի մտաւոր ու քննադա-
տական կարողութեանն ու աննրե-
լի աշտուութիւնը, ընկերացած՝ հրէ-
շային սուտերով :

Յայտնի է, որ վարժարանի մը բա-
րեկարգ վիճակը ու ստույնական
յատուցիմութիւնը անմիջապէս կա-
խուսն ունի, զայն կատարող ու
սուցչական մարմնոյ կարողութեանէն
եւ վերահսկող հոգաբարձութեան խզ-
ճամբա գործունեութեան : Տխուր ի
րականութեան մը ստղեւ, ցաւ է
մեզ ըսել, որ Շուվալէն ազգ. վար-
ժարանաց վիճակը ներկայիս մէջ,
աւելի քան երբէք, յետին անձկու-
թեան մատնուած է . զայն կատար-
ող ուսուցչական մարմնոյ անկար-
ողութեան եւ կազմալուծեալ ու կա-
նացի խարդաւանանքներու խաղա-

լիկ դարձած հոգաբարձութեան մը
դատապարտելի անխուժութեան պատ-
ճառաւ :

Ուսուցչական մարմնոյ ներկայ-
ցուցիչը Պ. Արսլան Տօնիկեան, Կեդ-
րոնականի Բ. կայքի շաշակերտ մը,
ոչ թէ անօրէն այդ նոյն իսկ ուսու-
ցիչ ըլլալու, առանց օրինակաւ իր
ուսուցչի ու պահանջելի փորձաձեւ-
թիւնն ունենալու . Տնօրէնը քա-
տուի պղծութիւնը կը վարէ :

Այս մասին երբ վերջերս արդարա-
ցի շիջողութիւն ու լողոջներ անդ
ունեցան, վարժապետ, հոգաբարձ
եւ թաղական ձեռքառած եւ շուտով
որոշեցին Կ. Պոլսոյ Կեդր. վար-
չութեան շնորհարար Ուսուցչական
խորհրդով զթաւաթ ողորմութեան դի-
մել . եւ մինչեւ այն ատեն իբր հա-
մալարանական պարծենցող Պ. Ար-
սլան Տօնիկեանի վկայագրի պէտք մը
ունենալը գրուածքներով ի ներքոյ
ներով եւ պատճառաւնեալ շարք
ստեղծութեամբ ուսուցչական խորհ-
րոյ նկատուածան յանձնելով, գու՞թ
ու շնորհ խնդրեցին :

Եւ որովհետեւ հոգայալ ձեւութեան
ստանապետը չէր կրնար կ'ալ ուզը
կեդրոնական վարժարանի Բ. կար-
գի (որ կը համապատասխանէ քիչ ու
չատարարութեամբ կրթականի մը
Բ. գլխին) աշակերտի մը համար,
ուսուցչական վկայական պահանջելու
անհեղեղութիւնն ունենալ, թաղա-
կանաւ իր ողորմութեան ան-
տեսպետ Բ. Քոստը Կեդր. մը-
նապաճ, որոշեցին միայն թաղակա-
նութեան միջոցաւ . ինչքով գրով
դիմել Ուսուցչական խորհրդոյ :

Այսպէս վարժարանական գործոց
բոլորովին անտեղեակ, պաշտօնագրի
մը իմաստն ըմբռնելու անպակաս
ազգայնականութեան խորհրդոյ
դիմելը (թող որ այս մասին որիչ կ'ս
կաններ ունինք եւ Ուս. խորհրդոյ
ուզընալ թղթակցութեան մը պատաս-
խանք տունէ վեջ իբր իրականու-
թիւն կրնանք հրապարակել) որուն
հետեւեալ Կ. Պոլսոյ Ուսուցչական
կազմակերպութեան Կ. Մարկոս Ա-
ւսուցչական, օգնական-ուսուցչի պի-
տելի վկայականով մը, որ իրական
արժէք ունենալէ բոլորովին հեռու
ըլլալով, չի կրնար յիշակալին պա-
տուութիւնն արտօնել ազգ. վարժա-
րանաց մէջ . քանի որ ընթերցարան
աշակերտի մը օրինաւոր ու էական
տիպովը չեմի, եւ չի կրնար արդէ
ունենալ :

Վարժապետ (Շարունակելի)

ԱՆ ԿԵՐԻՔ Է
ՔԻՉ ՍԸ ԶԳԱՑՈՒՄ

Շատոնց ընդունելով «ՇԱՐԹՈՒՄ»-
այն թիւը, որուն մէջ մի քանի տղ-
ղեր շնորհուած էր վերջերս Լոնսօնի
մէջ աչքերը դեռ նոր բացած «Պատա-
նի»-ի մը նոր աշխարհ գալուստ, հետ-
ինելով այդ կողմերէն, անկարող ե-
ղած էի անմիջապէս ակնաջիւղ հասած
փոփոխութեան լուստարանելու . Բայց
վերջապէս գտնելով հաստատաւոր
այժմ կուսակցական ներկայացնել զայն ըն-
թերցողաց և անոնց ուղարկութիւնն
զէթ մի քանի բողբոջի համար խնդրել
նախ պէտք է ամեն բանէ առաջ
զխանակ որ այդ գործին մէջ որբա՞ն-
յին աշակերտները ու է միջամտու-

Թիւն չունին, այլ լոկ թումայեան կողմէն անձն է որ, աղոյցը անուրը մէջտեղ ձգած, անոնց բերնով իր անհամ գործիքները հաստատուած թեան կը ներկայացնէ, մասնաորապէս պատանիներու՝ որոնց համար է, ինչպէս կը տեսնուի ծրագրէն!!! Խիստ մեծ-փոփոք ունի կղեր՝ բարձրական միութիւններ հաստատելը:

Արդեօք աղոյց երբէք չէ՞ սուսարկած, հարցուցի բարեկամիս, որ սերտ կապակցութեան մը մէջ էր անոնց հետ:

Ան ան սկստ. պատմել թէ օր մը ծրագիր մը բերեցի՞մ, աղոյց ձեռք տուած է զայն շնորհով:

Երբ սղաք իրարու փոփոխութիւն կը փոխանակեն, եղբայրութեան մասին, թո՛ւմայեան իր բերտ հայեացքները կը ձգէ զրոնքին, բայց աղաք երբէք փոյլ չեն ընկր ու կը շարունակեն լրենց գործը:

Երբ կը տեսնէ թէ խրատով տեղի պիտի ապ, քանի մը անգամ անուղղակի կերպով կուտայ զի «ՊԱՍՏԱՆ»-ին մէջ յօդուած գրել, սակայն անոնք կը զրոնքիմանան: Օ՛, պատանիս կը պարանայ այս յանդիմանութեան վրայ և կուզէ վերջ մը դնել:

Անգամ մը ամբողջ աղոյց ներկայութեամբ կը խօսի կրկին այդ մասին, սակայն վերջնականապէս կը մերժեն ըսելով թէ. — մի՛նչ, որ ծրագրէք չը փոխուի չենք կրնար գրել որովհետեւ մեզ ու մեր գաղափարին հակառակ է, մենք բարոյական են. բաներ չենք կրնար գրել:

Ի՞նչ յանգուզն պատասխան, ճախրասլաց թուիլիներով պղտիկներ անմահութեան ծոցը տանելու աննշն բորբոքած հոգւոյ մը: Օ՛, շատ ցատի վիճակ:

Այլ չը երկարենք այս մասին. թող ընթերցողը անսնէ թէ ուրիշ ինչն էր չեն յո՞ւստացուի որ այս անասկ մարդէ մը:

Վերջերս ձեռքս հասաւ Կ. Թուրքիայեան ստորագրութիւնը կողմ թուղթի կտար մը, ամենուն ծանօթ հրատեղ զինադրոյին, որ իր ազգին սիրոյն համար մէջտեղ ձգած է, ինչպէս լոկ հայ գրագէտներէն զինադուլ մը իրենց յուսի ինքնադրոյին, որովհետեւ... ահ, սկիսակ պատանիներն ալ կը վաղապէս յայտնուին... Չը նեւտե՞ր այս տեսակ մարդու երեսին ժողովրդական շատ իրաւացի աստուածաբար զոտերը քահանայ, ներսը սասանայ:

Անցք մարդ, չուզեր որ հրապարակը անհամ գործիքներով և յօդուածներով լեցուի, բայց երբէք չէ ստոյգած Գալիլիացի մեծ վարդապետին կտորերը դժբե՛ղ, բժշկեա՛ զանձն քոս: Ախի՛ք աւելի վատութիւն չէ՞ աղոյց անունով շահագործել, հասարակութիւնը խաբել, պատանի հրէշ մը ներկայանալով ընթերցողոց:

Յիրաւի շատ գէշ է մէկը սկսելի մտիկ և միւսը որովայնի ընկերաց ապուշ ևն. կոչել, սակայն ի՞նչ բառ պարծածել երբ մարդ գտնուի անոր նման անձի մը հանդէպ, բացի իսլացողից և անոր տունակ համարիչներէն, որ զեւ երկրորդ թիւին մէջ իսկ կը յայտարարէ թէ՛ քեզ խիստ փոքր խոսքի տեսակներն են, սակայն չպիտանա ու փորձառու գործակիցներ ալ ունին:

Որո՞ք են այդ պատանի խմբագիրները, և որո՞ք փորձառու ու չարամիտ գործակիցներ, կը հարցնենք իրեն. մի՛թէ բոլորն ալ ինքք թու՞մայեանը չէ՞. (խմբագիր կոչուած

ներք կը վկայեն զայս) ու աւելի յառաջանալով կը յարէ:

— «Շատ անգամ մատաղ հասակի (°°°) խորհածին, բաժնին և ըսելու կերպին մէջ անկեղծութեան, ճշմարտութեան և պարզութեան այն պիտի ձեռնարկուէր որ մեծամեծ բանաստեղծներէն ու հրապարակագիրներէն աւելի հրահանգիչ կը հանդիսանան»: Լսեցէ՛ք ու հիմնէք վրան. ո՛վ հրաշալիք, ո՛վ մեծագործութիւն, հի՛տա յիսուններն ալ պատանի դեր կը կատարեն! Քիչ մը անօթ:

Շատ պիտի շերկարեմ, միայն բնութեցողին սարակոյտի տեղի չը տալու համար կը հրաւիրեմ ջրոյ ըսածներս, եթէ ու է մէկը կուզէ ու մենք պտորատտ պիտի ըլլանք անոնու պատասխանել, աչքի առջեւ ունենալով բոլոր հաստատ աղբիւրներէ քաղուած փաստերը:

Հիմա կը յանձնարարեմ կարգաւ այդ յիմարական քուրջը և քննել զայն. ապահով եմ որ մեր ըսածներուն հակառակ կէտ մը չը պիտի գտնուի հոն. — ինչպէս «ՇԱՐՔ-ՈՒՄ»-ի խմբագրութիւնն ալ շեշտած էր անցեալները. — «Եւ իբրև ցոյց Ոսկիի պրոստրաբան» բարեկամութեան և զրաւնորթեան և այլ անհամ բաներու քով չէ խորշած Ալիշան անունն ալ դնել, իբրև բարոյականի ու նկարագրի աչք անձ մը: Իսկ Մխորեան պայմանները... օ՛, այդ մի՛ հարցնէք, անզուգական քարոզը, որուն բանաստեղծութեան անունը արուած էր հանդէսին մէջ, կը տեսնուի ՊԱՍՏԱՆ-ին մէջ ալ, իբրև բնաբանի կտոր մը, որպէսզի հանդէսին ներկայ չեղողներն ալ զայն կարգաւ բարեբաղդութիւնը ունենան, միութեան մղուելու համար: Ինչո՞ւ թո՛ղ դատէ:

Այոքանը բաւ կը համարենք առ այժմ, իսկ եթէ հարկ ըլլայ չը պիտի զանանք ուրիշ շատ մը ցաւալի իրողութիւններ ալ մէջտեղ հանել, որոնք մեր քով կը մնան:

Արդարաստեղ

Լոնտոն 6 ապրիլ 1902

ՀԱՍՏԱՐԱՏՈՒԹԻՒՆ ԹԱՂԱՎԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ

Ս. ՍԱՐԳԻՍ ԵՆԵՂԵՑԻՈՑ ՎԱՌՆԱՅԻ

Սկսեալ 1899 թիւից. 1հ ցվերջ 1902 ՎԵՏՏՐՈՒՄ 28

ՄՈՒՏՔ

Անուանական վկայագիրներէ	69.—
Գերեզմանատան մէջ տնակի մը շինութեան ի նպաստ տիկնոջ մը ձեռամբ եղած հանգանակութիւնը	93.70
Մկրտութեան վկայագիրներէ	149.—
Թագման հասոյթներէ	2459.10
Պատկարարի հասոյթներէ	1650.25
Տ. Սարգիս հօր ձեռամբ եղած հանգանակութեան	2218.75
Վաւերացումներէ	88.05
Յատուկ պատարագներէ	331.25
Աղքատաց համար շրջագայուած պնակներէ	333.40
Ազգայիններէ հաւաքուած Ազգային տուրք	456.—

Նուիրատուութիւն	13.—
Կալուածներէ	2117.30
Իւրազգիկէ	3086.75
Աւագանի տուրքէ	553.—
Հարաւ օրհնութիւններէ	531.10
Բանկային	7302.27 1/2
Պարտք զանազանաց (Մայր հաշիւ թիւ 13-88)	602.42 1/2
	22054.85

ԵՆԿ

Խորհրդարանին համար առնուած կարասիք	21.40
Ահմէտ Պիճարի պարտքին համար վճարուած տուկոս	292.60
Նախորդ Թաղ Խորհրդէն մնացած Ահմէտ Պիճարի և Սանտալեանի պարտքը վճարուած	2647.50
Գերեզմանատան համար գնուած կրկինար	44.—
Նախորդ Թաղ Խորհրդէն մնացած ապահովագրողչէքի պարտքը	294.40
1900էն սկսալ վճարուած ապահովագրողչէք	144.0
Աղքատներու վճարուած 279.77 կէս	
Հոգարարձութեան 1898ին վէճի հաճի Բէյլիք և ընկերութեան ունեցած պարտքը վճարուած	4131.55
1899 թիւի 1էն սկսեալ մինչ 28 փետր. 1902 Ազգային վարժարանաց Հոգարարձութեան վճարուած	9554.37 կէս
Ս. Եկեղեցու և Խորհրդարանի ծախս (°)	747.50
Այցելու հովիւին համար տան վարձք, ուտեստ ևն.	311.65
Հիւրավարութեան Տ. Գլխորդ քահանայի ճանապարհածախս	50.—
Քարտուղարի, Լուսարարի և Ժամակոչի ամսթոշակ	4420.—
1902 տարուայ Ս. Մանգեան առթիւ Գարապետի մը վճարուած	30.—
Զիթախիւրի, մեղրամոմի, մոմագործի և սրբաձայնի	1595.45
Պահանջ զանազաններէ (Մայր հաշիւ թիւ 9. 49. 105 120. 121. 122)	431.524էս
Սնուուկը պատրաստ դրամ	89 02 ու կէս
	22054.85

Վասն ճշգրտութեան հաշուոյ կ'ստորագրենք

Ի գիմաց Թաղ Խորհրդոյ

Ատենադպիր Ասենապետ

Ս. Գարապետեան Յ. Մ. Թովմասեան

Ներկայ հաշուեկշիւն մէկ մէկ օրինակներն ալ ի տես գրուած են թէ՛ խորհրդարանը և թէ՛ Եկեղեցւոյն բակը. գիտողութիւն ունեցող Պատ. ազգայինք՝ բաւ սահմանադրութեան պարտին թուականէս մինչև 21 օր Թաղ Խորհրդարանի գիմելով պէտք եղած բացատրութիւնն առնուլ. Սոյն պայմանաժամէն ետքը ըլլալիք ու է գիտողութիւն անյսելի կը մնայ:

(°) Եկեղեցւոյ և Խորհրդարանի ծախսն է. խուճի, քարիւղ, անուխ, Եկեղեցական անօթներու նորոգում, թուղթ, տետրակ, հեռագրեր, քամակածախս ևն.

— 0 —

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Պօլսոյ թերթերէն միայն մէջ իցմբր թղթակիցը հետեւեալը կը հաղորդէ:

— Երբ գիտնական Կ. Կոստանեան իր հարուստ մատենապարանը յոյներուն նուիրեց, ամեն ոք միաբերան բողոքեց անոր ոչ բանաւոր ընթացքին դէմ:

Հանգուցեալ գիտնականը պատասխան զգացումով չէր ըրած այդ գործը:

Ահա ասիկ թէ ինչու: — Անցեալ օր Մարտիանի վարժարանի նախորդ տնօրէններէն մին կը ըսէր որ Կոստանեան իր կենդանութեան տունն մէկ անգամէն 150 նարոյէտի գիրք նուիրած է ներսէսեան գրադարանին, բայց հաշիւ մէկ ամիս վերջ, երբ որ գիրք մը կը փնտաէ, որ 30 ֆր. արժողութիւն ունի եղբոր, չը կայ կը պատասխանուի:

Գողցուեր է և յս անասկ յուշահատեցնող պարագաներ պատճառ չգա՞ծ են որ այդ գիտնականը իր սքանչելի մատենադարանը յոյներուն նուիրեր է:

Եւ հիմայ մասամբ իրաւունք տուի իրեն. այս սողեւոր գրելու առիթ կուտայ ինծի այս օրերս հրէայ հնամասնութեան մը ձեռքս հասած մէկ քանի կտոր շահեկան գրքեր, որոնք ներսէսեան մատենադարանի կնիքը կը կրեն: Անոնց մէկը կրնայ հնութիւն մը նկատուիլ, քանի որ նահազարեանցի ձեռագիր նուիրուող կայ անոր ճակատը:

— Կարնեցիները հանրագրութիւնով մը խնդրած են որ Սասնարեան վարժարանը կարինէն խարբերդի Սորոսը վանքը չը փոխադրուի:

— Մշոյ գաւառային վարչութիւնը նկատելով որ իրենց թեմը տաս տարիներէ ի վեր միայն տեղապահներով կը կառավարուի, պատրիարքարանէ խնդրե՛ր է, որ առաջնորդ ընտրելու հրահանգ մը արուի. ընտրելիներու յուսուցակ մըն ալ փութացնելով:

Խոսքով վարդապետն ալ նոյն խնդրանքը ըրեր է, փափաք յայտնելով որ իր անունը ընտրելուց ցանկէն վերջուի որովհետեւ համոզուած է թէ ինք ձեռնհաս չէ այդ պաշտօնին:

— Պօլսոյ Ազգային հիւանդանոցի ի նպաստ նուագահանդիսը տրուեր է բաւական յաջող կերպով 1000 սակիի հասոյթ կենթադրուի:

— Աւսումնական խոշորի պատրաստած փիճակայւոյցէն կը տեսնուի որ Պօլսոյ մէջ 40 երկսեռ վարժարաններ կան 5376 աշակերտներով, 18 ուսուցիչներով և 110 վարժուհիներով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Բ Ք Ի Ա

Պուլսէն կը հաղորդեն որ Նոր Բաղարի գայմագամը ամբողջը փակուել է :

Շէմզի փաշան հեծելազուգումով մը Բրիշթինաէն Նոզի բաղար մէկնեք է :

Բարձրագոյն դուռը կը հաստատիացնէ որ խոսովութիւնները միայն տեղական բնաւորութիւն ունին :

Ալպանիոյ խոսովութիւններուն պատճառը այն է որ Մօլլա Ձէքին սպանողները դեռ պատժուած չեն : Իրէկի պաշտօնական հաստատութիւնները գրաւողները դեռ հեռացած չեն : Միթրովիցա Իրէքի ճամբան չի բանիր :

Կարատաղէն կը հեռագրեն որ զինուորական էշխանութիւնը սահմանագիծի սերկու գունդ զօրք եւս ղրկած է :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Թուրք կառավարութիւնը յիշատակագիր մը տուած է պետութեանց , որուն մէջ կը գանգատի թէ իր սահմաններուն մօտիկ Պուլկար հրոսախմբեր կը կազմուին , եւ իբր թէ գնդապետ մը Պուլկարի մէջ պտոյտ կընէ և գագառի ճաւեր կարասածէ : Բ. դուռը կաւելցնէ որ իրերու այդ կացութեան հանդէպ , Թուրքիա ստիպուած պիտի ըլլայ ըստ պառնացուած կէտերուն վրայ մեծաքանակ զօրք պահել :

Պուլկարի պարտաւոր է խիստ միջոցներ ձեռք առնել , եթէ ոչ պետութիւնները պարտաւոր են թուրքիան ազատ ձգել իր իրաւունքները պաշտպանելու համար :

Մարտ 20ին նախարարական խորհուրդը նիստ ունեցեր է խորհրդակցելու համար թուրքիոյ եւ բոլակական պետութիւններուն առումը յիշատակագրին համար :

Կը կարծուի որ պուլկար կառավարութիւնը մտադիր է յիշատակագրով մը պատասխանել . որուն մէջ պիտի ճշդութեամբ նրկարագրուի մակեդոնական շարժումին վիճակը Պուլկարիոյ մէջ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Յինչանտիոյ նահանգապետը սպաննելու երկրորդ փորձը եղած է :

Մոսկուայի ստիկանապետ Գրէպովի գէմ ալ սպաննութեան երկրորդ փորձը եղած է : Կը կարծուի որ ստիկանապետին գէմ մեծ դաւադրութիւն մը կայ :

Ռուս թերթերը կը հաղորդեն որ Պուլկարիոյ նախարարապետ պ. Տանէֆ յայտարարած է որ ինք քաղաքական նպատակներով չէ պացած Ռուսիա :

Այլ իբրեւ ճամբորդ :

Պ Ե Լ Ճ Ի Գ Ա

Պրիւքսէլի մէջ մարտ 28ի գիշերն ընկերվարականները մեծ ցոյց մը ըրեր են ի նպատակ հանուր ձայնաւորութեան : Ոստիկանութիւնը միջամտել է պաղղէնքով . քանի մը վիրաւորեալներ կան :

2,500 հանքային զործուորներ զործադուր ըրեր են :

Լիէժի մէջ ալ ի նպատակ ընդհանուր ձայնատուութեան ցոյցեր եղեր են :

Ոստիկանութիւնը միջամտել է պաղղէնքով : Վիրաւորեալներ կան :

Պրիւքսէլի Ազգային պահապանի մէջ ուսմար մը պայթել է :

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Մանչեսթրի վերաբերեալ դաշնագրութիւնը օգոստոսին պիտի յայտարարուի :

Ռուսները կը յայտարարեն որ իրենք պատրաստ են երկաթուղիին գիծը ետ առլ , եթէ Անգլիա համաձայնի Չիլիի գծէն հրաժարիլ :

Ք Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Լօրտ Բիւնէր կը հեռագրէ որ պօէր զօրավար Գրուիցինկէր արգարացուցուած է և պիտի պահուի իբրեւ սովորական գերի :

Անգլիայէն Պրիւքսէլի թերթերէն միտոյն կը հաղորդեն որ անգլիական կառավարութիւնը պատրաստ է անկախութիւն տալ թրանսվալի հասարակապետութիւններուն , Բաբի ազատարներուն ներքէլ , պօէրներու վիսանները հասուցանել :

Չ Ո Ի Ի Ց Ե Ր Ի Ա

Պանաի կը հաղորդեն թէ մարտ 24ի երեկոյին Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան Համաժողովի . Ժընէւի մէջ , նիւսերը վերջացեր են :

Համաժողովը որոշել է զործնական պրօպականդան շարունակել մամուլի միջոցաւ , պատուիրակներ ջրկել Կովկաս եւ թիւրքիա հայերուն վիճակը ուսումնասիրելու համար :

Բուէարկուեր է 25,000 Քր.բ.ի պիւստէ մը իր հրատարակութիւններուն և իր ծրագրին մէջ

քանի կէտերը իրագործելու համար . 5000 Քրանք ստորագրուեր են համաժողովի անդամները վերջին նիստին մէջ :

Զրգ համաժողովը պիտի գումարուի Պրիւքսէլի մէջ 1904ին . կեդրոնական կօմիթէն կրկին Ժընէւի մէջ պիտի մնայ :

Բ Ա Ց Ն Ո Մ Ա Կ

Թէեւ Տօպրիչը Պուլկարիոյ պղտիկ քաղաքներէն մէկն է , ուր նկարչութեամբ եւ լուսանկարչութեամբ կը պարապիմ , չը նայելով որ գրանուած շրջանակս ալ շատ յարմար չէ մեծ յառաջիմութեան , բայց միշտ աշխատած եմ յետաճուալ ըլլալ արուեստի գիտական եւ արուեստական ամենավերջին կատարելագործել . թեանց քայլ առ քայլ հետեւիլ . այսօր ունիմ արուեստին ամենավերջին կատարելութեամբ օժտուած զործիքներ , որոնց հետ միասին շնորհիւ նաեւ նկարչութեան արուեստիս , այսօր կարող եմ արտադրել ակունքի սիւնակն ամենակատարելագործուած պատկերներ . որոնք մասնաւոր կերպով մշակած եմ եւ որուն մէջ նրկարչութիւնը մեծ դեր ունի :

Ասիկայ փորձելը զժուար չէ . կըրնաք ձեր մէկ լուսանկարը զրկել իմ հասցէիս եւ պիտի ստանաք մեծադիրը , օրինակին ճիշդ նման , միայն 15 Քրանքի փոխարէն . այն ալ ստանալէ եւ հաւանելէ վերջը վճարելու պայմանաւ :

Իսկ անոնք որ կտաւի վրայ իզաներկ բնական գոյներով պատկերին կուզեն ունենալ , պէտք է ընդհանուր քաղաքի մը տան նոյն անձին գոյնին նկատմամբ . (երեսի ընդհանուր գոյնը , աչքերու եւ մազի գոյնը) բնական մեծութեամբ 35 Քրանք արժող , կրկին վերջոյիցալ պայմաններով :

Թէեւ շատ սեղեր ակաւնտիսման պատկերներ կը պատրաստեն , բայց ես կը վստահեցնեմ որ եւ ոչ մէկը այնչափ կատարելագործուած կրնայ ըլլալ , որչափ նկարչի մը պատրաստածը . վասն զի ամենց կանոնաւոր ռըթիւշի ոչ մէկ ակաւնտիսման արժէք կրնայ ունենալ :

Հասցէ
Ն. Սիսակեան Նկարիչ-Յօթօկրաֆ
Տօպրիչ
2-4

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

Վաղը , կիրակի գիշեր ժամը 9ին ԹԱՏԵ՛ԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿՈՂՄԷ Ի ՆՊԱՍՏ

Պ. ՕՆԵԻԿ ՍԵՄԵՐՁԵԱՆԻ պիտի ներկայացուի՝

ՍԱՍՆՈՅ ԱՊՍԱՄ-ԲՈՒԹԻՒՆԸ

անուն ռըբրզութիւնը 5 արար և խիստ ծիծաղաշարժ գաւեշտ մը , գիներն գիրամատչելի . Չաւեշտը տանկերէն ինքուաւ :

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

40ԵԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
—
Հայրապետ Սարգսեան սերէսլափա կա մեծ պօղոտային վրայ .
Ամենաընտիր ապրանքէ պատրաստի եւ մասնաւոր պատէրով կօշիկներ . գները չափաւոր . Վստահ ենք թէ յաճախորդները գոհ պիտի մնան ամեն կերպ .
Վառնա
9

L'EUROPEEN
—
Շարաթաթերթ քաղաքական , միջազգային իրաւունքի , բնկերական հարցերու , գրական եւ գիտարուեստական :
Տարեկան 15 Քր .
Վեցամսեայ 8 Քր .
Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ
—
Եւրոպայի Հայ Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընկելու համար պէտք է գրիմել հետեւեալ հասցէով
Իւնիոն sk Չէրիսիսիս Արմ .
Լ'Եօրոք Բիւ սր Լ'Եփօյ սր Շիլի 2
Սուխա Ժընէվ
Կարգողիւր Յունճաճողով

Գ Ո Ւ Թ Ա Ն
—
Հանդիս արեւնայ . հողագործական զիտակալ եւ արուեստագիտական Հիմնադրութեան
Գարնդիկ Բ. Մեծասարեան
Հրատարակուած է Բ.րգ թիւր .
Հանկան բովանդակութեամբ :
Տարեկան բաժնեկրին 12 Քր . դիմել հիմնադրին , 23 rue de la օյըլաթ

ԽՄԱԿՐՈՒԹԻՒՆ , ՆԱՐԺՈՒՄ
—
Կը սպաղորուին ամէն լեզուէլ այցետումս , հասցէտումս , նամակալուիս , հարսանեկան հրաւրագիր , մահալիք :
Գիները յոյժ դիւրամատչելի :
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին :
ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՆԵՒԻՒՄ

Դրանը կանխիկ
ՄԻՄՕՆ ՆԱՀԱՊԵՏ ԵՎ ԸՆԿ .
Ս. Ժիով . Գրիսուգոճօ 5715
(Իտալիա) Վէնէտիկ
Ծուծօք .—Կը փութանք յայտնելու ազնիւ ազգայնոց որ ի մօտոյ պիտի հրատարակենք նաեւ մեծադիր լուսատիպ , առայնակարգ եւ ամենաեւտաքրական պատկեր մը . որ կը ներկայացնէ հոչակաւոր ազգային գործիչներու ժողով մը :
Նոյն պատկերին լուսատիպ քարտերն եւս կը պատրաստենք :

Отговорникъ
Мурадъ-Франосянъ
Печ. Взаимность — Варна